

ԲԱԺԱՆՈՐԴՈՎՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարին	համար
արեկու	12 ֆր.
վեցսմալ	7 "
Արսասիմանի	
համար ստեկան	15 ֆր.
վ. ցուսեւոյ	8 "
Աւերիկայի	համար
ստեկան	3 ց.
վեցսմալ	1.50 "

Ծանուցումն տղր ու ուսուցիչներին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. հրեֆին ու էլի սեզաններու համար 20 0/0 զեղը կրուայ:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ է

# ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՆԱԿԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ  
դր կիչ խմբագրութեան  
հասցիին

Редакция на вѣстникъ  
"Шаржумъ"  
Варна

Redaction du journal  
"Charjoum"  
Varna (Bulgarie)

Պուշկարինի համար  
ձեռք  
15 ՍԱՆԹԻՄ  
Արսասիմանի համար  
ձեռք  
20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ  
տրուիր

ՇԱՐՇՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

## Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գիշաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿՍՈՒՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՆ  
ԽՈՒՈՐԸԱՆՆԱՆ ՄՕՅԻՄ ԲԱՂԱԿԻ ՎԻՃԱԿ  
ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փափաքողները կրնան  
իրեն դիմել  
Զար-Պորտ փողոց Վառնա

## ԱՆՁՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երբ պիտի ազատի հայ ազգը  
անձնակազմութիւնները գաղափարներու տեղ ընդունելու հիւանդութեանէն:

Մեր անշարժութեան, իրար չը հասկնալնու, համախմբուելով գործ մը ի գլուխ հանելու անկարող ըլլալնու պատճառը անձնակազմութիւններու մեծագոյն տեղը տալերնիս է: Գաղափար մը կը յայտնես, ե ունկնդիրը յայտնած այդ գաղափարի կարեւորութիւն կուտայ ոչ թէ անոր ներքին արժէքին, պարունակած ճշմարտութեան համեմատ, այլ նայելով որ զայն յայտնող իր կուսակցութեանն է թէ ոչ: Հրապարակի վրայ կը վերստան այս վայրկեանիս ինքեակոյ փրօփականտիսդներ, անխոնջ ճոռումփիճոգներ, որոնք կը կտրեն, կը կախեն, կը գատապարտեն. մէկ խօսքով աշխարհք իրար կանցնեն նստած տեղերնին, հեղինակուոր, վրձնական, հրամայողական, սպասանական ամէն շեշտերով: Ի դուր պիտի աւարկես թէ, երէկ գեռնոյն այդ մարդը ուրիշի մը առջեւ, որ այսօրուան իրեն պաշտպանած գաղափարներուն կուսակից էր, բոլորովին հակառակ բաներ կըսէր. այսօր հովերը փոխուած են, քամին ուրիշ կողմէ կը փչէ. երէկուան իր աստուածացուցած անձնակազմութիւնը այսօր իրեն հակառակորդ մըն է, հետեւաբար անոր գաղափարներն ալ պէտք է պոյքո-

թի ենթարկուին: Երբ աստուածը ուրիշ պատու կը ջալէ, ինք ալ պէտք է անոր փողայր ըլլայ, նոր մարդ, նոր գաղափար: Իրողէն անձնակազմութեանց ազգեցութեան տակ ստրկացած հետեւակ ճոռումփոսները ի՞նչ ուրոյն գաղափար կրնան ունենալ, ի՞նչ հաստատ ներքին համոզում, որ զայն ուրիշին փոխանցեն: Ինչո՞ք թուովորէն կը կրկնեն, յաճախ ծիծաղելիօրէն ազաւաղուած ու չի հասկցուած մեկնաբանութիւններով, ինչ որ լսած են իրենց նախապատիւ համարած սակամ նա անձնակազմութեանէն: Միշտ անձնակազմութիւն:

Այս անձնակազմութեան ախտը, վրդովիչ ծաւալ ստացած է այսօր: Հասարակութիւնը յառաջ կերթայ նոյնիսկ մամուլէն պահանջելու որ անպատճառ ըզրապի սակամ նա անձնակազմութեան կեանքով ու գործով, և երբ չընեն, դժգոհութեան ձայները կը բարձրանան: Մեր մամուլն ալ պապանձէր, մնացեր է, չենք հասկնար ի՞նչ կը մտածեն ու չեն գրեր ուն: Կրթական հարցի վրայ երկար յօդուածներ կը գրես, ամէն կերպով կը բողոքարես մեր կրթական պաշտօնեաներու օգտակար կամ ֆլաւա կար կողմերը, տիրող կրթական սխալմին առաւելութիւնները կամ թերութիւնները: Ոչ ոք չի հետաքրքրուիր, չի կարպար նոյնիսկ. բայց երբ ահա վարժուհիի մը իւլիստ խնդիրը կը լլայ, ու կը ձգես որ հոգաբարձու և վարժուհի իրենք իրենց մէջ համաձայնին, առանց խնդիրը յուզելու, և գործը կը ճոռոտելու, ահա ամէն կողմէ գանգատներ կը տեղան: Մեր թերթերը կը քննա՞ն կոր, ինչո՞ւ չեն գրեր ուն: Եւ կամ կրօնքի շահագործումներու և անոնց խաչագոյ հերոսներուն վրայ ընդարձակ յօդուածներ կը գրուին, նոյնիսկ օրինակի համար հաշակուոր Օրթով Միւսոյի «Ապպէ Թիւրէն թարգմանութիւններ կը ըլլան, որոնք

կրօնակառններու մոլոր կեղծիքը, ստուծուը, անբարոյականութիւնները, խարդաւանները ամէն ինչ վերջապէս մերկապարտուց կընեն, առանց սակայն այսինչ հայ տէրտէրը կամ այնինչ վարդապետը մատնանշելու, ոչ ոք կը կարգայ գրուածները, ու երբ, մեր նոր տէրտէրը սրկայութիւններ կընէ եղբր, ու չենք գրեր, ձգելով որ թաղական ու ժողովուրդ իրենց տէրտէրին պատիժ տան, եթէ ունի, դարձեալ յանցաւոր կը ըլլանք, ու միշտ նոյն գանգատը կը լսենք: «Ախպար», մեր թերթերը կը քննա՞ն կոր, ինչո՞ւ չեն գրեր ուն:

Բայց ինչո՞ւ գրեն: Ինչ կարեւորութիւն ունի վարժուհի մը, կրթական հսկայ հարցին հանդէպ, մասնակորները մեր խօսքը: Մամուլը ուստիկանատուն չէ, որ այսինչ անձին ըրածը կամ այնինչին խոսածը ամէն վայրկեան լրտեսէ, արձանագրէ ու կարեւոր գործ մը ըրածի պէս պոռայ պոռայ:

Մամուլի դերը այդ չէ: Խմբագիրը հասարակական մեծ ցաւերը իրենց բնորոշ ու հիմնական ախտանշաններու մէջ կը պարզէ, առանց հետաքրքրուելու այս ինչ վարժուհիով կամ այն ինչ քահանայով: Եթէ հասարակութիւնը պէտք կը զգայ, կը հետաքրքրուի իր հանրային գործերով ու գործիչներով, ինք է որ պէտք է անոնց դատը իր ձեռքը առնէ, և մամուլը հիմնուած է անոնց միջոց տալու համար որ իրենց դժգոհութիւնները կամ գոհունակութիւնները առիթ ու նենան յայտնելու հրապարակաւ: Խմբագիր մը բնաւ պարտաւոր չէ երկու հոգի կուսելուն պէս, գրիչը առնել ու յօդուած գրել, Հապա հասարակութեան դերը ի՞նչ է: Ու եթէ հասարակութեան մը մէջ այդքան պզտիկ գործ մը տեսնելու կարող անհատներ ալ չիկան, ու կը սպասեն որ ամէն վայրկեան, խմբագիր մը գտնուի իրենց կարիները, կիրքերը կամ

հակառակութիւնները սրելու համար, թող սպասեն յաւիտեան: Մենք չենք հետաքրքրուիր կիրքէ ծնած վէճերով:

## ՇԱՂԱՊ

ՆԱՄԱԿ ԼՕՆՏՈՆԷՆ

30 Ապրիլ

Կարօն կախուած!—Թիւրք յամառութիւն: Ինչ կը խորհի անգ. մամուլը:

Երբ կարօնի սպանութեան լուրը հասաւ անգլիական մամուլին, դեռ քանի մը շարժներ առաջ, շփոթումն ու հրապարակուած անկարագրելի էր: Ոմանք վերադարձին զայն ուստիկանական խաղի, ոմանք անուանեցին ընկերվարական պիկի, և ժխտող կամ վաւերող տեղեկութիւն մըն ալ չը յաջողեցին խնդիրը մնաց առկախ, մինչեւ որ վերջին հեռագիր մը բաւական լուսարանեց:

Ամէնուն ծանօթ էր կարօնը իր յունվար 8/22ի երեւումով: Այնուհետեւ բովանդակ մամուլը աշխարհի թնդաց իր գովեստով, Աստուածացուցին զինքը, Փախաւ Եւրոպա և ատեն մը մնաց հոն: Ըսել որ այդ ատենէն իսկ կեղծ էր կարօն, կարելի չէ. իր էն ուրիշիմ թշնամիներն ալ կը խոստովանին ատի: Յետոյ, սակայն, փոխուեր է. սուս կառավարութիւնը խեղացի է. կաշառած է զինքը մօտ 40000 ուսպիւով և որովհետեւ ինքն ալ քիչ մը թոյլ բնակչութեան տէր մէկը կերելի, ինկած է թակարդը:

Երբ երկրորդ անգամ Բարիք այցելեց կարօն, ալ լատինական թաղին ուսակական անկիւնը պզտիկ խոցին մէջ պարտկուած անձը չէր ան, ոչ ալ եղկելի դէմքով հայր կարօնը:—առային կարգի ձեւուած ու կարուած քօսթիւմ մը, բարձր գլխարկ և դեռ ճէնթիւմնանման այլ պէտքեր: Աս ալ պատճառ մը չէր որ կարօն խարդախ կարգուբաց մը համարուէր: Ամէն ոք ազատ է հազարի ու սպիւղ իրեն հաճելի եղանակով, մանաւանդ կարօնի նման մէկը որ ամէն օր կարչուուէր մամուլի ականաւոր ներկայացուցիչներէ, գրողներէ և այլոցմէ, որոնց առջեւ հարկ էր դիրք պահել: Սակայն, օրին մէկը կը լուսննք որ կարօն օթմօսպիլով չուեր է զէպի արեւածիծաղ հարաւը, նիս, Գան, Մօնաքօ, և կանգ առած

Մօտ թէ—Քանզո, ու, հոն, կանանց սեղանին չուրջը նստած՝ բոլորէ թ կը դարձնէ, այսինքն բաղդալազ կը խաղայ: Այս լուրը հաղորդեցին քանի մը անգլիական պահպանողական օրաթերթեր միայն եւ բաւական ալ գայթակղութիւն յառաջացուց, բայց մոռցուեցաւ չուտով: Անցաւ երկար ատեն: Առտու մըն ալ բոլոր թերթերը յայտարարեցին «միտիքա կան անյայտացումը» կարծիք, իսկ յաջորդ առտուն՝ «Մանչեսթր կարտիքը» (ազատական գլխաւոր օրաթերթ մը Մանչեսթր հրատարակուող որուն Ս. Բեթերսպորթի թղթակիցը ռուս մը ըլլալ կը թուի) երեւան հանեց կարծիք 8 օրեւէ ի վեր կախուած ըլլալը, մինչ ուրիշ մը, «Մօրնինկ Լիտեր», որ նոյնպէս ռուս թղթակից ունի, կը յայտնէր թէ՛ գուցէ մարմինը մինչեւ այդ տողերը գրած պահուէ կախուած ըլլայ տանիքէն...

Այս օրուան հասած հետադիւր՝ թէ Բեթերսպորթի մէկ նշանաւոր փաստարանը ընդունած է կանացի ձեռքով գրուած նամակ մը եւ կարծիք Գրեյտի Լիտերի մէջ ունեցած գրամարկի բանալին, քիչ կասկած կը թողու ալ եւս իր ճակատագրի մասին: Կարծն թէ եւ երկու գաւկի տէր, որոնք կը խնամուին մօր մօտ կենթ մահուան պատճառով: Գաւկի մեղքերէն ազատ չէ մնացած, եւ երեւան եկած իր հրեայ հոմանուհիին պատմութիւնը, զափնի մը գորգրաւ կը ճգնի նաեւ երկրորդ մը Գրեյտի մէջ: Կը ցուցնեն թէ էայր կարծն իր Սողոմոն նախահօր շաւիղներուն մէջ քայլել է փորձած: Բայց իրողութեւնը այդ փափուկ կէտը...

Անշուշտ մինչեւ այժմ «Շարժում» հաղորդած կը լինի սպանութեան մանրամասնութիւնները: Կարծն իրապէս արժանի էր սոյն եղբրական վարսմանին: յիբրա-ի դաւաճան մըն էր ան որ ժամանակին ի վեր: Անհարցեբ՝ զոր «Թէլէկրաֆ» թղթակցին նման անձ մը իսկ անկարող եղած է հիմնովին լուսարանել եւ վճիռ սրձակել: Յամենայն զէպս մօտ ապագայի մը մէջ, անտարակոյս, ա մէն ինչ պիտի բացայայտուի:

Վերջին պահուն թերեւս ամենէն աւելի յուզում եւ ցնչում պատճառող զէպքը Լուստոն՝ թրքո-եգիպտական բանավէճն է: Նամանաւանդ պահ

պանդական մամուլին զայրոյթը անբացատրելի է: Կատողած ու փրփրած են որ Ապտիւլ Համիտ կը համարձակի ձօն Պուլի զէմ ատանկ յամառ յոխորտանք մը փորձել: Ո մանք ատոր ներքեւ տեսան Վիլհելմին մատր, Ալէքսիսի քանքէրանսէն մնացած փորագաւին իրրեւ արդիւնք, բայց «Մթէնաբրտ» ու այլ շարք մը երկրորդական պահպանողականներ ստիբել կուզէին հաւատարմոր ատի թուրքին կողմէ ինքնաբեր բան մըն է եւ ոչ թէ արտաքին գրողութիւն:

Ատի տակաւին զժուտ է որոշել: Ազատական մամուլը, ի հարկէ, շատ տարօրինակ լուսութիւն մը կը պահէ բաղդատմամբ միւսներուն եւ ամէն ճիգ կը թափէ Գրեյտի մէջ «մատր անսնելու» կարծիքը վերցնել: Մանաւանդ որ Պերիին գլխաւոր թերթերն ալ կը հերքեն ատանկ միտք մը եւ «Յ Յայրութեան» նոյն իսկ կը թելագրէ Սուլթանին խաղաղ համաձայնութեան գալ ու վէճը փակել:

Ինչ ալ ըլլայ պօրագան, սակայն, Համիտ շատ սխալ հաշիւներու մէջ է ինկած: «Մօրնինկ Լիտեր»-ը որոշ առաջնակարգ օրաթերթ մը, իր խմբագրական առաջնորդողով կը յայտնէր թէ Սուլթանը այս քարը գործած է լոկ աչքի առաջ ունենալով ներկայ ազատական դահլիճին սկզբունքները: Ինչպէս եւ այլ համաձայն զանազաններէն, որոնք միշտ ստեղծ են տուած լոկ վճար փակելու սխրոյն: Ուրախալի է, կաւելցնէ յիշեալ թերթը, որ ներկայ մինիստրութիւնը կամքի հզօրութիւն ցոյց տուաւ, ինչ որ, թերեւս, ոչ ոք կակնկալէր եւ ազգը կրնայ սրտի ամենայն հանդարտութեամբ, թողուլ խնդիրը Սրբ Էտուրտ կրէյթ, որուն պաղարիւն եւ սոկուն քննադատութեան ապացոյցը Ապտիւլ Համիտ ալ ճաշակելու առիթը պիտի ունենայ:

Բայց ինչ ալ գրեն ուրիշներ, երբէք պիտի չը կրնան հասարակ «Տէլէկրաֆ»-ի այն խմբագրականին, որուն մէջէն զայրոյթի, կրակի եւ վառօթի հոտ կուզայ բացարձակապէս: Այդ յօդուածը գրուած է իր Պուլտի թղթակցին լուրերուն վրայ, որով կը յայտարարէր թէ երկար ձգձգութիւնը թուրքերուն կարծել կուտան թէ Անգլիա կը վախնայ կոր եւ պարտաւորուած պիտի տեղի տայ Թուրքիոյ առաջարկին: «Թուրքերը, կըսէր թղթակիցը, առած մը ունին որ կըսէ.—Նախ

զարկ, ապա խօսէ:—Մինչեւ որ չը տեսնեն հարուածը, անոնք կը կարծեն թէ վախն է Անգլիան ետ պահողը խիստ միջոցներէն...

Այսպիսի էնտիլ մը, ի հարկէ, «Թէլէկրաֆ» չէր որ պիտի կուտար եւ անա լսեցէք սա տողերը, որ կը գրէ նոյն այն ձեռքը՝ որ շնական սինթզով մը կը ձափառէր սուլթանասպան մահափորձի յաջորդ օրը, զնորհաւորելով սուլթանը իր մագապութեամբ եւ բարբախտ փախուստին համար...

«Գրեթէ ստորնացուցիչ բան մըն է.—կըսկսի «Թէլէկրաֆ», վշտահար սրտով մը, պարտաւորուած ըլլալ թրքո-եգիպտական սահմանագլխաւորին հարցին այսպիսի ծանր երեւոյթ մը տալ: Ընդ Պուլտի թղթակիցը, որ առ հասարակ ճիշտ տեղեկութիւններ կը հաղորդէ, կըսէ թէ սուլթանին աճող յամառութիւնը արդիւնք է այն համոզման որ Անգլիան բան մը ըրած չէ տակաւին՝ որովհետեւ կը վախնայ խիստ միջոցներ ձեռք առնելէ: Յառաջ կերթայ ըսելով որ «Սուլթանը զխոյզին անտարբեր է կայսրութեան սահմաններէն ներս կատարուած գործողութեանց եւ կազդուի միայն այն ատեն՝ երբ վտանգը մերձեցայ մայրաքաղաքին»:

Հոս արուած է մեզ թոյնն ու զեղ թափը յաջորդական պարբերութեանց մէջ թիւրքը—պաշտօնական թիւրքը որ ամէնէն ապակառուած արարածն է աշխարհի (բայց ոչ՝ երբ Անգլիայէ դուրս այլոց շահերուն կը զգչի)—կը կարծէ որ Անգլիա կը վախնայ յարձակիլ Օթոման կայսրութեան վրայ՝ որովհետեւ գոյու թիւն ունի իր երկրին մէջ թրքոսէր կուսակցութիւն մը, եւ իթէ զաշտին մէջ ապրող թիւրքին նկատմամբ է հարգը, ան գոյութիւն ունի գեռ: Սակայն եւ ոչ մէկը կրնայ գտնել այսօր Օթոման կայսրութեան—անձեռնմխելի պահ պահման կուսակցութիւն մը Անգլիոյ մէջ: Ապտիւլ Համիտ ջանացած է անհետացնել ստի: Բացի այն պարագայէն որ անտարակոյս մօտաւոր արեւելեան խնդիրը երեւոյն բերին է, ոչ մէկը հոգ չընեն թէ սուլթանը արգեօք քաջառողջ զիճակի մէջ է թէ մահամեծ: Բայց ըլլալով սուլթան մը շահեկանութեան զուրկ չէ... Եթէ, ուրեմն, իր նախարարները մընան յամառ ու մերժեն իրենց գուշակերը ետ քաշել թապալէն, զոր գրաւելու ու եւ արդարապէս մընեն, այն ատեն մնացած միակ բանն է սուլթանին ջղերը փորձել մայրաքաղաքին մօտ վտանգով: Մէկ երկու առաջնակարգ յանձնաւեր Սրբ-թրք-թուրքի պատուհաններուն ներքեւ Ապտիւլ Համիտը ինչպէս կը խաղաղ խիստ միջոցներէն...

քաղաքին մօտ վտանգով: Մէկ երկու առաջնակարգ յանձնաւեր Սրբ-թրք-թուրքի պատուհաններուն ներքեւ Ապտիւլ Համիտը ինչպէս կը խաղաղ խիստ միջոցներէն...


Ապա դատաւարութեամբ ամէն գնով խաղաղութիւն հայցողները՝ որոնք կուզեն քաղաքավարի սեթոտներով շարժիլ, կաւելցնէ—

«Թուրքիոյ Սուլթանը — թէ եւ կը պարծի, ուրիշ շատ մը վսեմ տիտղոսներէ գաւ Աստուծոյ շուքը ըլլալ երկրի վրայ—խորհրդով, իօսաքով եւ գործքով ալ կիսաբարբարոս մըն է. պէտք է հնազանդի եւ եթէ կը կարտի քանի մը օրուան՝ իր հպարտութիւնը կուտալու, թող առնէ այդ ժամանակը: Բայց պէտք է տեղի տայ մէկ երկու շաբաթէն. Եթէ մերժէ, գեղեցիկ առաւօտ մըն ալ պիտի արթննայ զիտեղու Նըլուզէն կեանքին է՛ն անհաճոյ տեսարանը: Ամենաթեթեւ կասկած չւնինք որ իր վարձկաններն են որ տարածած են Գրեյտիան զի՞քը զրգելու զրոյցները: այդ տեսակետով, բոլոր տեղեկութիւնները պէտք է ըրնան եւ են՝ սուտ...»

Յրանսական մամուլին համակրանքը Անգլիոյ հանդէպ, զարմանալի կէտ մը չէ: «Թան» պարագայէն կը յայտարարէր թէ ինչ ալ ըլլայ Մեծն Բրիտանիոյ պարագան, համաձայն 1904 ապրիլ 8ի պայմանագրութեան՝ պարտաւոր են թիկնալ հանդիսանալ անոր ու եւ ժամանակ եւ ու եւ զէպքի պահուն:

Բայց խնդրանքի պահի, չես գիտեր թէ ինչո՞ւ այսքան կը յուզուին ու կը փրփրին եւ վերոյիշեալ պահպանողական օրկանը մինչեւ իսկ յառաջ կերթայ յայտարարել որ՝ առտու մը Համիտ ոււսեր պիտի գտնէ Նըլուզի հոգեբուն վրայ: Եթէ չուզէ համակերպիլ եւ սահմանազրկել հետացնել զուրկերը, Չեն յիշեր որ տասնեւ մէկերորդ ժամը հասած չէ տակաւին: Սուլթանն ալ իր Վիլհելմ Բարեկամին դաս առաւ. նպատակը աշխարհը իրով զբաղեցնել է մինչեւ ժամանակ մը, երբ եկաւ վերջին րուպէն, երբ բաւական զրգոնց անգլիացիներուն պող ու անարիւն ջիղերը այն ատեն... նորէն ձեռք կանոնէ նարկիլէին զլանր եւ... արդէ մոռալը տ էլ իւ մ!

Յ. ՅՈՒԱԿ



**ՄՈՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ**

ԸՆԿԵՐՈՑՍ Յ. ԱՂՍՆԵՐԻՆ

(Շար. Անխ. Բիւնի)

Ընդարձակ սենեակ մըն էր, բակին վրայ նայող երկու մեծ պատուհաններով: Մէկ անկիւնը իրարու վրայ դիպած էին խոշոր սնուկներ, որոնց անխուփ բերաններէն պաշտօնական թղթերու փոշոտ կապոցներ դուրս կը թափէին: Պատերը զարգարուած էին ոստիկանի հին համազօգեաններով, սուրբերով, զօտիներով ու զանազան մեծութեամբ մարակներով: Միակ նշանը՝ որ ոստիկանական թանգարան մը կամ աւելորդարան մը մտած չէի, երկու գրասեղաններ էին, որոնցմէ մէկուն ետեւը գրագիր մը նստած էր, իսկ միւսին ետեւը քօմիսէրը: Գօմիսէր

Օսման պէյր թէ եւ զէմքով ծանօթ էր ինձի, բայց այդ պահուն բաւական պիտի զժուարանայի ճակչնալ զինք, եթէ անխաղոյս թաւ պիտի լը և սեղանի տակ երկնցած տիտանական ոտքերը չըլլային: Ըսկատը կարմիր թաշկինակով՝ կապած էր, որու տակէն դեռնախնձորի կեղեւներ մինչեւ աչքերուն վրայ կը կախուէին: Այլ ձեռքը գլխուն նեցուկ տուած, ընկողմանէ չէր թիկնալ ունին վրայ եւ ճակտին յարգարանքն ու առջեւ գրասեղանին վրայ շարուած գեանախնձորները կը մատնէին, որ խելքին պտուկը լաւ վիճակի մէջ չէր:

Քանի մը քայլ յառաջանալով գետնամած բարեւ մը տուի եւ կտնգնեցայ: — Հը, ի՞նչ կուզես—մըլտաց առանց դիքքը փոխելու:

— Պէյ Լէյտիտի, կանչած էիք զիս, ատոր համար եկած եմ:

— Ո՞վ ես դու:

— Մառանիգ Կարապետ Թորոսեան: Ասոր վրայ ուժգին փնջելով չրտ կուեցաւ և սեղանին վրայէն թուղթ մը ջղկելով—հա՛, Ահմէտ ազա խանը վաճառական Թորոս օղլու Կարապետը դ՞ուք ես:

— Այո, Լէյտիտի, ծառանիգ եմ: Եւ պահ մը ձեռքի թուղթը կարգայէ ետքը:

— Ունութեան Մամա օղլու Առաքելը կը ճանչնաս:

— Այո՛, պէյ Լէյտիտի, կը ճանչնամ:

— Ի՞նչ փափ ժամանակէ իվեր կը ճանչնաս:

— Տղայութենէ իվեր կը ճանչնամ:

— Իւրեմն լաւ բարեկամներ էք:

— Այո՛, տէր իմ:

— Իսկ Հաճութեանցի մօլլա Հասան Էֆէնտիս ալ կը ճանչնաս:

— Ո՛չ, այդ անուով անձնաւորութիւն մը չեմ ճանչնար:

— Չո՞ս ճանչնար, տարօրինակ բան. մենք քեզ իբր վկայ կանչած ենք. որովհետեւ երկէ, երբ Առաքել ըլլալիք չուր մօլլա Էֆէնտիսին հայհոյած է իր խանութիւն մէջ, դուք ալ հոն ներկայ գտնուած ես:

— Այո, երկէ Առաքելի խանութիւն մէջ ցաւալի զէպքի մը ակնատես եղայ, բայց մօլլա Էֆէնտիսն առաջին անգամն ըլլալով տեսայ հոն, անունն ալ մինչեւ հիմա չէի գիտեր:

— Է՛լ լաւ, Առաքելը ինչո՞ւ հայհոյց մօլլա Էֆէնտիսին:

— Ներեցէ՛ք, տէր իմ, Առաքելը ոչ մէկ հայհոյութիւն չըրաւ, ընդհակառակը շատ մեծ քաղաքավարութեամբ ու քաղցրութեամբ կը վար-

Մ. ԱՆԴՐԵՍՅԱՆ և ԲՆԿ.

Ընդհ. Վաճառական-Գործակատարներ

Կընդունուին ամէն կարգի յանձնարարութիւններ Անգլիական ու է տեսակի ապրանքաց համար նմանապէս կը տրուին պատուէրներ:

Աւելի մանրամասնութեան համար դիմել մեր մասնաւոր գործատեղին.


8-9 New Street Bishopsgate, London E. C.

ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՇԻ 11 մարտի

Չր նայելով այն բանին, որ Վէյ-դէնրաուտի յանձնաժողովը հաստատեց բռնութիւններ, կողոպտումներ և հրդեհումներ փաստերը նա ապացուցեց նոյնպէս, որ ապօրէն գործողութիւններ ինչպիստորներն էին իրանց համագրեւոր եւ սպանողական կոչումը արատաւորող աղմուկաւորները և օֆիցիները. չը նայելով վերջապէս, այն բանին, որ Փոխարքան, արքայութիւնը եւ ճշմարտութիւնը հաստատուեց. համար բարեհաճեց կարգադրել որ պաշտօնից հեռացվեն մեղաւորները քննութիւն կատարելու, այդ պարունները շարունակուեմ են ժողովրդի համար իրանց կորստաբեր գործունէութիւնը Ապրիլի 9-ին ճարտարները գնաղին Սկոթլենդի մէջ յիստ պահանջելու այն 12 զուխ տաւար որ կողակները քննելու ճարտարի վրա երկրորդ արշաւանք գործելու ժամանակ բայց պատասխան սաացան թէ պշտով կողակներով կը գանք գիւղը ոչ միայն 12, այլ հարիւրաւոր զուխ տաւար առնելու և քարը քարի վրա չենք թողնիս: Այդ սպանալիքը դամակելու սրի նման կ'սլաքուէ ազգաբնակչութեան վրա մանաւանդ այն պատճառով, որ իսկոյն եւ եթ յանձնաժողովի գալուց յետոյ տեղի ունեցաւ երկրորդ արշաւանքը կանայքն իրանց երեսներով գլուխը կորցնելով փախան Մուչկապատ գիւղը: Զիբրայիլի գաւառի պրիստաւ իշխան Գուրաժովի մէջ բարբարոսական ցանկութիւն երեւաց տանջել զժմախտ և անմեղ գեղջուկներին: Ապրիլի 8 ին 100 կողակներով շրջապատեց Առաքել գիւղը. ստակալի ձեռն տուեց գիւղացիներին՝ պահանջելով նրանցից ինչ որ մարդիկ: Ազգաբնակչութիւնը

Վարանդայի բռնութիւնների ցնցող տպաւորութեան տակ սկսեց փախչել զէպի լեռները և անտառները. Պրիստաւից ստակալի ձեռնված գիւղական վարժապետը պատկած է: Դպրոցական պարապմունքները զաղարեցված են:



ՇՈՒՇԻ 11 մարտի

Ապրիլի 7 ին Չխուխուխում Ղուեղարու, Ախմեղու եւ Սէյիղու գիւղերի թուրքերը քննելու իրանց տաւարը Սրաժուրթ գիւղի հայերի դաշտերը և սկսեցին ոտի տակ տալ ցանքանքը: Հայերը դուրս եկան գիւղից և խնդրեցին թուրքերին հեռանալ, որոնք գինված էին երեքքոճային վիճակով: Նրանք ոչ մի այն չը հեռացան, այլ և սկսեցին կրակել վալպերով: Երէկ թուրքերը կրկին արշաւանք գործեցին: Տրամադրութիւնը երկիւղալի է: Սպասվում են մեծ բարդութիւններ, եթէ աղմուկաւորացիան միջոցներ ձեռք չառնէ թուրքերին զսպելու համար: Աշտուկալիկոպոս

Եւա Բովորոզեան յրազրին Գանձակից հաղորդում են հետեւեալը: Գանձակի գաւառապետը հաղորդեց նահանգապետին, որ այն բոլոր հայերի եւ թուրքերի գիւղերը, որոնք գրանվում են 5-րդ մասում, զինաթափ են արված: Չարդախի հայ գիւղում բնակչներին զինաթափ անելու ժամանակ, արտիլերիան քանդել է 8 տուն:

Արևշ գաւառի հայ գիւղացիները հետգնահէ ցիր ու ցան են լինում այս ու այն կողմ:

Մեծողներ թիւր միմիայն Գեանդակից եւ Հաւարիկից արդէն 40-ից անցնում է:

Մազուրդու գիւղից մտ 10-15 ընտանիք մինչեւ որո էլ գտնվում են վարվարայ, Ղարովան եւ Աքլամ թուրք գիւղերում:

Այժմ այդ ընտանիքները սպասողական դրութեան մէջ են: Նրանց կեանքը անհամեմատ և անցնում քան թէ Ղարաբաղում ապաստանված հայերին, որովհետեւ թուրքերը նայում են նրանց վրա, որպէս ապագայ թուրքերի եւ լաւ պատվում, որով ուզում են գրաւած լինեն միւս քաղցած եւ հայ գիւղերում մեծողներին մնացողներին:

Մշակի մէջ մի քանի թղթակցութիւններ տպվեցին, բայց տառապող ժողովուրդի դրութիւնը իրապէս ա-

ւելի ծանր է: Սարսափելի բաներ են պատմում սովածակ լինողների մասին: Նպաստների բաժանումն յանձնված է եղել Հաւարիկի քանանայ Տէր-Սահակ Տէր-Պողոսեանցին: Որպէս հլու հպատակ գիւղական տուգիրին, այդ քահանան սկզբից մինչեւ վերջը ոչ մի բան չարեց ժողովրդի ինքնապաշտպանութեան համար:

Հաւարիկեցիք չիմաց տալով քեանդակեցոց աւելի շուտ են փախել Ղաւարայ, եւ աւելի շատ բան են ազատել քան քեանդակեցիք որոնք միայն գիւղերվայ ժամի 12 ին իմանալով հաւարիկեցիների փախուստը իրանք էլ ամեն բան իողած միայն գաւառները եւ իր ուքով զննցող տաւարն են տարել բոլոր գիւղացիք վաղորօք թաղած են եղել հողում իրանց թանկագին եւ նոր բաները, բայց թուրքերը այդ էլ բոլորովին հանել տարել են, իսկ տարած տաւարները զանաբանեցիք իսկոյն թանգացնելով ամեն բան սկսել են առնել չնչին գնով թէ տաւար եւ ուրիշ բաներ:

Շատ լաւ կը լինէր, որ մէկ մայր գար եւ անձամբ այդ ժողովրդի կարիքները մասին տեղեկութիւն տար հասարակութեան: Եթէ չուտով օգնող չը լինի, շուտով ձեռքից կընկնեն գիւղացիներն արտերն ու այգիներն, իսկ զրանից զրկվելուց յետոյ, յուսահաւած ժողովուրդը աւելի ծայրահեղութեան մէջ կընկնի:

Վերջերս գիւղացիք կողակների հետ գնացել են այգիները մի քիչ կարգի գցել եւ դարձեալ եւ դառել այդ մի քանի օրը գիւղացիքը գիւղերը մնացել իրանց թալանող մինգաչելու րցիների մօտ, որտեղ տեսել են իրանց բոլոր թալանված ապրանքները, բայց ոչ մի բան, իհարկէ, չեն կարողացել ստել:

Թուրքերը ասել են, եթէ վեսաները պահանջելու էք էլ միք գալ մեր գիւղերն, իսկ եթէ չէ, եկէք, մենք էլ ձեզ կօզենք գիւղն կը վերաչինենք:

Հայերից թալանած ապրանքները ծախում եւ հեռացնում են իրանցից այս վերջին օրերս Մինգաչեուրի ափանդին (մոսկ) իր բաժին կողոպտուից 15 սայլ չինարի (ղօթոյ) ծառեր է ծախել վարվարեցի հարուստ թուրք ամրալին:

Հայերը ուզեցել են բռնել տան, բայց վատահ չը լինելով թէ իրանք անվտանգ կը մնան, չեն արել դեմ: մօլլան որ այդքան միայն ծառեր է կարողացել թալանել տեսէք միացողները ինչքան կը տանեն:

Բաւական է թեթեւ խուզարկեն եւ իսկոյն թուրքերը մէկը միւսի արարմունքը կանեն շնորհիւ տիրող երկպառակութիւնների: Հայերից շատերը թալանից առաջ տրվել են իրանց ծանօթ քրիվաներին, այսօր այդ քրիվաները առում են թէ վեսաները պահանջելիս կը տանք իսկ եթէ չէ չենք տալու:

Քեանդակ, Հաւարիկ, Մագուրդու գուր հայաբնակ են եւ անյայտար գիրքերով եւ շրջապատված թուրքերով, առաջ էլ խաղաղ եւ ապահով կեանք չէինք կարողանում վարել, իսկ այժմ, անտեղ մնացել են միայն այգիները առանց չափարի որն բոլորը այրվել է թէ գիւղում եւ թէ այգիներում: գիւղի միայն տեղն է մնացել, չէնքերը եւ միւս բաները, ծառերը բոլորովին փչացրել են, մինչեւ անգամ նորոգելն անհնարին է, հարկաւոր էին նոր ապահով հողեր, որտեղ այդ 6 գիւղից մի նոր գիւղ հիմնել, բայց մեր ժողովուրդը գլուխը կորցրած մնացել է անորոշ եւ յուսահատ դրութեան մէջ, առանց առաջնորդի: Արշակ Թեվոսեան ՄՇԱԿ



2. Յ. Դաշնակցութեան 1 կենտրոնական կոմիտէն բաց է թողել մի տղր, որով յայտնում է «հասարակութեանը» որ 1 կենտրոնական կոմիտէի հրամանով մահաւան պատժ են թարկւեց 2. Յ. Դաշնակցութեան Զինական մարմնի գործակալ Լիբարիտը մի շարք գեղձումների և գողութիւնների համար:

Կեցցէ այդպիսիսական Դաշնակցութիւնը, որ գողութեան համար մարդկանց մահաւան է դատապարտում, մի պատիժ, որի դէմ բողոքում է այսօր ամբողջ Ռուսաստանը:

Մենք հաղորդել էինք, որ վարանդայի զէպերը քննելու համար փոխարքայի կողմից ուղարկւած էր մի քանի յանձնաժողով Այդ յանձնաժողովը շրջելով հայ գիւղերը և տեղն ու տեղը քննելով կատարած բարբարոսութիւնները, այժմ վերադարձել է Թիֆլիս եւ ներկայացրել իր զեկուցումը փոխարքային: Քննութիւնը պարզել է, որ տեղական թերթերի հաղորդած լուրերը այդ զէպերի մասին ոչ միայն ճիշտ են, այլ երմօլայի վերին ու Ֆրէյլիսների այդ մարդ-հրէշների կատարած բարբարոսութիւնների մի թույլ նկարագիրն է միայն, որ արձանագրւել է թերթերում: Քննիչ յանձնաժողովը

ուէր մօլլա էֆէնտին հեա. բայց մօլլա էֆէնտին... քիչ մը... մօլլա էֆէնտին արդէն նախապէս... զրգռուած տրամադրութեան մէջ ըլլալուն... այդ սխտոր գէպերն պատճառ եղաւ:

Այսինքն, խօսքին թիւրքերէնը՝ պարզապէս ըսել կուզես թէ յանցաւորը Առաքելը չէր, այլ մօլլա էֆէնտին:

Այո՛, պէ՛ս խօսքով ըսել կուզես թէ Առաքել կոչուած քեաֆի ի սրիկան մօլլա էֆէնտին աւելի լաւ մարդ է:

Ինչո՞ւ լռեցիր. պատասխան չտա՞ս:

Պէ՛ս էֆէնտի եւ այդ տեսակ յանդուգն վճիռ մը չեմ կրնար արձակել. ինչպէս քիչ առաջ ըսի, մօլ-

լա էֆէնտին եւ չեմ ճանչնար, կրնայ շատ ազնիւ ու պատուական մարդ ըլլալ բայց երէկուան գէպերն մէջ. իրաւունքը իր կողմը չէր:

Ասոր նայէ, ասոր նայէ—դարձաւ քօմիսէր պէյը իր քարտուղարին հեգնական ծիծաղով մը—գիմացուկա՛գներ փաստաբանութիւն կընէ. մօլլա էֆէնտին կրնայ լաւ մարդ ըլլալ եղբր, բայց ինք չի ճանչնար եղբր, կարծես թէ դեռ վիճարանելիք խնդիր մը ըլլար պատկանելի սուրբ մօլլայի մը և... հայ խանութպանի կտորի մը համեմատութիւնը. հա՛, հա՛, հա՛, հա՛. ինձի նայէ՛. դուք շատ երես էք առեր, ձեր չափը վաղուց մոռցեր էք, բայց ես ձեզի նորէն այնպէս մը սորվեցնեմ ձեր չափը. որ յաւիտեան չմոռնաք:

Եւ զլիով նշան մը տուաւ քարտուղարին, որ անմիջապէս դուրս ե-

լաւ իսկ ինք զլիտուն կասը քակելով գետնտիննօրի կեղեւները նորոգել սկսաւ:

Քիչ մը ետքը քարտուղարը դուռը բացաւ եւ ներս մտան երէկուան մօլլան ու Առաքելը:

Մօլլան բուռն շարժումներով քովէս անցաւ եւ խոժոռ ակնարկով մը զիս չափելէ ետքը դնաց նստաւ քօմիսէրին քով, որ արդէն տեղէն ելած եւ աթոռ մը պատրաստած էր իսկ Առաքելը. օ՛հ մի հարցնէք, խեղճ մարդուն տեսքը պարզապէս ազդեցրս գալարեց: Գլուխը ահագին փաթաթի մը մէջ կորսուած, աջ թեւը անբնական կերպով կողին փակած, զողող ջայլերով եւ ողորմ ու պաղատազին նայուածք մը ուղղելով երեսիս, քիչ մը անդին գլուխը կախեց ու կանգնեցաւ:

Հա՛, ատամից ցաւը դեռ չան.

ցա՛ւ, քէրս թա՛, ատ ո՛րչափ բան եւ փաթթեր գլուխդ. կարծես վիրաւորուած ըլլաւ եւ ան ալ թընդանօթի ուսմով—մոնչեց քօմիսէրը երկու ձեռքով փառահեղ պիտերը շտկելով եւ զիս ցուցնելով հարցուց՝

Ա՞ս է քու վկադ:

Այո՛, պէ՛ս էֆէնտի—թոթովեց Առաքելը խեղճ ձայնով:

Աս երէկ հո՞ն էր—դարձաւ քօմիսէրը հօճային:

Կարծեմ... այո՛, այո՛ հոն էր պատասխանեց հօճան դարձեալ խոժոռ, ակնարկ մը սնեկելով ինձի:

(Շարունակելի)

հաղթ է այնտեղից հեռացել եւ անս...

Թէեւ լուր էր տարածւած, որ Եր...

Նրան ուղեկցում է գինեորական...

ԲԱԳԻՌԻՍ շուտով կսկսի լոյս տես...

Մեծ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ (Փամբակ)...

Դաշնակցութեան ամբողջ կոմիտէի...

Ցանկալի է, որ մեր ձեռնհաս տե...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ կիրակի, կէսօրէն վերջ...

Պուկարական «Նատէժտա» յաճա...

աշնորդեցին

Ի պատիւ իրենց ժամը 2 ին ճաշկեր...

Երեկոյան ժամը 7 ին—«Գրալ Գարու»...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

«Տէլի Թէլէկրաֆ» լրագիրը թրքա...

Մալթայի մէջ գտնուող Պորսէսդէր...

Ամէնքն ալ այն կարծիքի են թէ՛ Թրք...

«Թալմա» լրագիրը կը յայտարարէ թէ՛ Թրք...

Բ. Գուրը կը հաւատէ թէ այս ճիւղաւորումը...

Անգլիան ամէն գնով չպիտի թոյլատրէ...

Ընդհանուր շինութեանց նախարարութեան...

Թրիբունլէ կը հաղորդեն (որ յանձնախումբ...

կը յարձակի, կը սեղմէ կոկորդը և պզտիկ...

Անգլիական կառավարութիւնը շատ խիստ...

Էլ—Կրիշուպարուած «Միւնէրվա»...

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մոսքովայէն կիմացնեն Ամսոյս 23 ին...

Արդի նախարարական խորհուրդի նախագահ...

Վիէնայի քաղաքական շրջանակներու...

Լամտորֆը քանի մը օրէն հեռանալու է...

Յարը «Լեքսանտր Նէվս քիթ» պատուանշանը...

«Ներքոր Ձեզի հրաւիրեցի այն կարեւոր...

Գուրու պատուանշանը շատ օգնեցին և այսպէս...

«Ձեր գործունէութիւնը և կառավարական...

Պորսէսդէրը շատ օգնեցին և այսպէս կառավարական...

«Ձեր գործունէութիւնը և կառավարական գործերու...

«Տէլի Թէլէկրաֆ» Թէլէրս պուրկէն կիմանայ...